ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀՌՀ)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2024թ. հունիսի 07-ի № 274 որոշմամբ

ՌԵԿՏՈՐ Է. Մ. ՍԱՆԴՈՅԱՆ

# ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևան 2024

# Բովանդակություն


1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 3
2. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ԽՆԴՐԻՆԵՐԸ ..... 4
3. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ..... 6
4. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ..... 10
5. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՀԱՍԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՈՀ ԱՅԼ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԵՏ ..... 10
6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶԱԿԵՐՊՈՒՄԸ ..... 11
7. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 13
8. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ ..... 13
9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 13

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը կարգավորում է «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան» բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության (այսուհետ ՀՌՀ) Ինստիտուտի (ֆակուլտետի) գործունեությունը:

1.2. Ինստիտուտը հավասարեցվում է ֆակուլտետին:

1.3. Ինստիտուտը օժտված չէ առանձին իրավաբանական անձի կարգավիճակով:

1.4. Իր գործունեության մեջ Ինստիտուտը ղեկավարվում է ՀՀ և ՌԴ գործող օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, ՀՌՀ կանոնադրությամբ, ՀՌՀ Գիտական խորհրդի որոշումներով, ՀՌՀ ռեկտորի հրամաններով, հանձնարարականներով և այլ իրավական ակտերով:

1.5. Ինստիտուտը կարող է վերակազմակերպվել, վերանվանվել կամ լուծարվել ՀՌՀ ռեկտորի հրամանով՝ ՀՌՀ Գիտական խորհրդի որոշման հիման վրա:

1.6. Ինստիտուտի կառուցվածքը հաստատվում է ՀՌՀ ռեկտորի կողմից ՀՌՀ Գիտական խորհրդի որոշման հիման վրա՝ ելնելով ինստիտուտի կողմից իրականացվող խնդրիների շրջանակից:

1.7. Ինստիտուտը հանդիսանում է ՀՌՀ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՌՀ ռեկտորի անմիջական ենթակայության տակ:

1.8. Ինստիտուտը կարող է ունենալ առանձին բանկային ենթահաշիվ: Ենթահաշվի միջոցները գտնվում են Ինստիտուտի տրամադրության տակ և կարող են ուղղվել Ինստիտուտի զարգացմանը և նրա աշխատակիցների աշխատանքի խրախուսմանը:

1.9. ՀՌՀ կառուցվածքում գործում են հետևյալ Ինստիտուտները.

- ✓ Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ինստիտուտ,
- ✓ Ինժեներաֆիզիկական ինստիտուտ,
- ✓ Կենսաբժշկության և դեղագիտության ինստիտուտ,
- ✓ Տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտ,
- ✓ Իրավունքի ինստիտուտ,
- ✓ Միջազգային հարաբերությունների և հասարակագիտական ու քաղաքական գիտությունների ինստիտուտ,
- ✓ Բանասիրության և միջմշակութային հաղորդակցության ինստիտուտ,
- ✓ Մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտ,
- ✓ Արևելագիտության ինստիտուտ:

1.10. Ինստիտուտի կառուցվածքի մեջ կարող են ներառված լինել.

- ✓ թողարկող ամբիոններ,
- ✓ համահամալսարանական ամբիոններ,
- ✓ բազային ամբիոններ,
- ✓ գիտակրթական կենտրոններ (այդ թվում համատեղ),

✓ ուսումնական, ուսումնագիտական և գիտական լաբորատորիաներ,

✓ բիզնես-դպրոց, այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք ձևավորում են ՀՌՀ Գիտական խորհրդի որոշմամբ:

## 2. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ԽՆԴՐԻՆԵՐԸ

### 2.1. Ինստիտուտի գործառույթները

2.1.1. Ինստիտուտի զարգացման ծրագրի (ռազմավարության) մշակում և իրագործում,

2.1.2. կրթական (գիտակրթական) գործունեության կազմակերպում ըստ կրթության մակարդակների (բակալավրիատ, մագիստրատուրա, անընդհատ և ինտեգրված կրթություն, ասպիրանտուրա, դոկտորանտուրա), մասնագիտությունների և ուսուցման ձևերի (առկա, առկա-հեռակա, հեռակա),

2.1.3. Ինստիտուտի կրթական, գիտական և այլ տեսակի գործունեությանն առնչվող և այն կարգավորող նորմատիվային ակտերի մշակում և Ինստիտուտի գիտական խորհրդի/ՀՌՀ ռեկտորի/ՀՌՀ Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացում,

2.1.4. Ինստիտուտի կազմի մեջ մտնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգում,

2.1.5. Ինստիտուտի կազմի մեջ մտնող կառուցվածքային ստորաբաժանումների գիտահետազոտական գործունեության կազմակերում,

2.1.6. Ինստիտուտի միջազգային կրթական և գիտական կապերի ամրապնդում, միջազգային համագործակցության զարգացում,

2.1.7. Ինստիտուտի փաստաթղթաշրջանառության և գործավարության կազմակերպում,

2.1.8. Ինստիտուտի նպատակների իրականացմանն ուղղված այլ կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծում:

### 2.2. Ինստիտուտի խնդիրները

2.2.1. ուսումնական գործընթացի կազմակերպման և կրթական ծրագրերի իրականացման նորարարական մեթոդների մշակում և ներդրում,

2.2.2. նորմատիվային և մեթոդական բազայի մշակում և դրա հիման վրա Ինստիտուտի շրջանակներում իրականացվող բակալավրի, մագիստրոսի և անընդհատ ու ինտեգրված կրթական ծրագրերի շրջանակներում նեղ մասնագիտական կրթական պրոֆիլների ձևավորում,

2.2.3. Ինստիտուտի գիտահետազոտական գործունեության ռազմավարության մշակում և իրագործում,

2.2.4. հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների իրականացում՝ Ինստիտուտի գիտակամանկավարժական կադրերի, գիտաշխատողների, ասպիրանտներ և ուսանողների ներգրավմամբ,

2.2.5. ասպիրանտների (հետազոտողների) գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում, ատենախոսությունների պատրաստման համար անհրաժեշտ պայմանների ձևավորում,

2.2.6. Ինստիտուտի գիտակրթական գործունեության մեջ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում, դրանց լայն կիրառում Ինստիտուտի կառավարչական գործունեության կազմակերպման մեջ,

2.2.7. տեղական և միջազգային առաջատար գիտնականների ներգրավում գիտակրթական գործունեության մեջ և համատեղ հետազոտություններում,

2.2.8. Ինստիտուտի աշխատակիցների մասնագիտական վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում,

2.2.9. բակալավրի, մագիստրոսի և անընդհատ ու ինտեգրված նոր կրթական ծրագրերի մշակում,

2.2.10. Ինստիտուտի ուսումնառողների համակազմի մեծացմանն ուղղված միջոցառումների իրականացում,

2.2.11. Ինստիտուտի շրջանավարտների մրցունակության բարձրացում, աշխատանքի շուկայում նրանց ինտեգրմանն աջակցություն,

2.2.12. Ինստիտուտի արտաքին և միջազգային կապերի զարգացում, գործընկերային հարաբերությունների շրջանակի ընդլայնում և զարգացում ՀՀ և այլ երկրների գիտակարթական հաստատությունների հետ, միջազգային գիտակրթական ծրագրերին մասնակցություն,

2.2.13. միջազգային վարկանիշավորման համակարգերում ՀՌՀ ընդգրկմանն ու դրանցում առաջխաղացմանն ուղղված աշխատանքներին աջակցություն,

2.2.14. Ինստիտուտի դասախոսների որակական կազմի շարունակական զարգացում և նրանց գործունեության արդյունավետության բարձրացում,

2.2.15. Ինստիտուտի կազմում բիզնես-միավորների գործունեության զարգացում՝ ուղղված ուսանողների կիրառական մասնագիտական ունակությունների զարգացմանը և Ինստիտուտի գործունեության

համար լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ձևավորմանը,

2.2.16. Ինստիտուտի կայքի տեղեկավական ապահովում, դրա բովանդակության շարունակական թարմացում,

2.2.17. միջազգային, այդ թվում դրամաշնորհային, նախագծերի իրականացում:

## 3. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**3.1. Ինստիտուտի կառավարման մարմիններն են.**

3.1.1. Ինստիտուտի աշխատակիցների և ուսանողների ընդհանուր ժողովը,

3.1.2. Ինստիտուտի Գիտական խորհուրդը,

3.1.3. Ինստիտուտի Փոքր խորհուրդը,

3.1.4. Գործադիր ղեկավարությունը (Ինստիտուտի տնօրենը և վարչական անձնակազմը):

**3.2. Ինստիտուտի աշխատակիցների և ուսանողների ընդհանուր ժողով**

3.2.1. Ինստիտուտի կառավարման բարձրագույն մարմինն է հանդիսանում Ինստիտուտի աշխատակիցների և ուսանողների ընդհանուր ժողովը, որը հավաքվում է Ինստիտուտի գիտական խորհրդի կողմից սահմանված ժամկետներում: Ինստիտուտի աշխատակիցների և ուսանողների ընդհանուր ժողովի պատվիրակների ներկայացուցչության քվոտաները և ընտրության կարգը սահմանվում են Ինստիտուտի տնօրենի կողմից:

**3.3. Ինստիտուտի գիտական խորհրդի ձևավորումը և գործառույթները.**

3.3.1. Ինստիտուտի կոլեգիալ կառավարման մարմին է հանդիսանում Ինստիտուտի Գիտական խորհուրդը (ԳԽ):

3.3.2. Գիտական խորհուրդը ունի հետևյալ կազմը՝ ԳԽ նախագահ, ԳԽ քարտուղար, ԳԽ անդամներ: Ինստիտուտի ԳԽ կազմը ձևավորվում է Ինստիտուտի աշխատակիցների և ուսանողների ընդհանուր ժողովի կողմից ընտրության արդյունքներով:

3.3.3. Ինստիտուտի ԳԽ կազմը հաստատվում է ՀՌՀ ռեկտորի հրամանով՝ Ինստիտուտի տնօրենի ներկայացմամբ:

3.3.4. Ինստիտուտի ԳԽ որոշումները պարտադիր են Ինստիտուտի բոլոր աշխատակիցների և ուսումնառողների համար:

3.3.5. Ինստիտուտի ԳԽ գործառույթները.

3.3.5.1. Ինստիտուտի զարգացման ծրագրի (ռազմավարության)

քննարկում և երաշխավորում ՀՌՀ Գիտական խորհրդի հաստատմանը,

3.3.5.2. Ինստիտուտի կողմից իրականացվող բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլանների քննարկում և երաշխավորում ՀՌՀ Գիտական խորհրդի հաստատմանը,

3.3.5.3. Ինստիտուտի ամբիոնների կողմից դասավանդվող դասընթացների ուսումնամեթոդական կոմպլեքսների քննարկում և հաստատում, այդ թվում այլ Ինստիտուտների շրջանակներում իրականացվող կրթական ծրագրերի գծով,

3.3.5.4. Ինստիտուտի կազմի մեջ մտնող ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների զարգացման ծրագրերի (ռազմավարության) և հայեցակարգերի հաստատում,

3.3.5.5. Ինստիտուտի ասպիրանտների և դասախոսական անձնակազմի գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների քննարկում և հրապարակման երաշխավորում,

3.3.5.6. Ինստիտուտի ընթացիկ գործունեության հետ կապված այլ որոշումների ընդունում:

**3.4. Ինստիտուտի տնօրենի նշանակումը և գործառույթները**

3.4.1. Ինստիտուտի գործունեության անմիջական կառավարումը իրականացվում է Ինստիտուտի տնօրենի և տնօրենի տեղակալի կողմից:

3.4.2. Ինստիտուտի տնօրենի պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը իրականացվում է ՀՌՀ ռեկտորի հրամանով:

3.4.3. Ինստիտուտի տնօրենը անմիջականորեն ենթարկվում է ՀՌՀ ռեկտորին:

3.4.4. Ինստիտուտի տնօրենի որոշումները կարող են վերանայվել ՀՌՀ ռեկտորի կամ Ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:

3.4.5. Ինստիտուտի տնօրենի պաշտոնական իրավասությունները սահմանվում են ՀՌՀ Ինստիտուտի տնօրենի պաշտոնի անձնագրում:

3.4.6. Ինստիտուտի տնօրենի տեղակալը նշանակվում է ՀՌՀ ռեկտորի հրամանով՝ Ինստիտուտի տնօրենի ներկայացմամբ:

3.4.7. Ինստիտուտի տնօրենի գործառույթները.

3.4.7.1. Ինստիտուտի զարգացման ծրագրի (ռազմավարության)

իրականացման ուղղված աշխատանքների կազակերպում,

3.4.7.2. Ինստիտուտի ամբիոնների և բիզնես-միավորների գործունեության համակարգում և վերահսկողություն,

3.4.7.3. Ինստիտուտի վարչական անձնակազմի գործունեության կազմակերպում և վերահսկողություն,

3.4.7.4. Ինստիտուտի ամբիոնների կողմից իրականացվող կրթական ծրագրերի բազային և աշխատանքային ուսումնական պլանների մշակման և դրանց Ինստիտուտի Գիտական խորհրդին հաստատման ներկայացման կազմակեպում,

3.4.7.5. Ինստիտուտի ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի անհատական ուսումնական ծանրաբեռնվածությունների ներկայացում հաստատման՝ ամբիոնների վարիչների հետ համատեղ,

3.4.7.6. Ինստիտուտի կողմից իրականացվող կրթական ծրագրերի դասացուցակների և ուսումնական գործընթացի առանձին բաղադրիչների իրականացման ժամանակացույցների մշակում,

3.4.7.7. ուսումնական գործընթացի կազմակեպման համակարգային վերահսկողության կազմակերպում,

3.4.7.8. ամբիոնների գիտահետազոտական գործունեության կազմակերպման աջակցություն,

3.4.7.9. Ինստիտուտի միջազգային կապերի զարգացմանը, օտարերկրյա բուհերի հետ գործընկերային հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգում,

3.4.7.10. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, վարչական անձնակազմի և այլ ստորաբաժանումների համապատասխան պաշտոնների թեկնածուների ներկայացում ՀՌՀ ռեկտորին,

3.4.7.11. ՀՌՀ ռեկտորին՝ Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և Ինստիտուտի վարչական անձնակազմի աշխատակիցների թվից խրախուսման և պաշտոնի բարձրացման թեկնածուների ներկայացում,

3.4.7.12. Ուսանողների հեռացման, ազատման, տեղափոխության, վերականգնման և այլ առաջարկությունների գծով զեկուցագրերի պատրաստում՝ ՀՌՀ ռեկտորին ներկայացման

նպատակով,

3.4.7.13. ՀՌՀ-ում գործող նորմատիվ ակտերի համապատասխան խախտումներ կատարած պրոֆեսորադասախոսական անձնակազմի և աշխատակիցների, ասպիրանտների և ուսանողների հանդեպ վարչական և կարգապահական միջոցների և պատժամիջոցների կիրառում, համապատասխան առաջարկությունների ներկայացում ՀՌՀ ռեկտորին:

**3.5. Ինստիտուտի վարչական հաստիքային կազմի ձևավորումը և գործառույթները**

3.5.1. Ինստիտուտի հաստիքային կազմը ձևավորվում է ՀՌՀ ռեկտորի հրամանով՝ Ինստիտուտի տնօրենի ներկայացմամբ:

3.5.2. Ինստիտուտի վարչական անձնակազմի գործունեության անմիջական ղեկավարումը իրականացվում է Ինստիտուտի տնօրենի կողմից:

3.5.3. Ինստիտուտի վարչական աշխատակիցները նշանակվում են Ինստիտուտի տնօրենի և Ինստիտուտի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ՝ ՀՌՀ ռեկտորի հրամանով:

3.5.4. Ինստիտուտի վարչական անձնակազմի գործառույթներն են.

3.5.4.1. ուսումնական գործընթացի ընդհանուր կազմակերպում,

3.5.4.2. ուսումնական գործընթացի իրականացման ընթացիկ վերահսկողություն,

3.5.4.3. ուսանողների հաճախելիության վերահսկողություն, միջանկյալ ստուգումների, քննաշրջանների և պետական ավարտական ատեստավորման արդյունքների ամփոփում,

3.5.4.4. հաշվետվությունների պատրաստման նպատակով անհրաժեշտ փաստաթղթաշրջանառության և այլ տեսակի հաղորդակցության գծով ամբիոնների աշխատանքի ընդհանուր համակարգում,

3.5.4.5. Ինստիտուտի փաստաթղթերի արխիվացման կազմակերպում,

3.5.4.6. Ինստիտուտի ուսանողների համար մշակութային, հասարակական և այլ միջոցառումների կազմակերպում,

3.5.4.7. Ինստիտուտի ուսանողների համար Ինստիտուտի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազմակերպված հանգստի, մշակութային, գիտական և այլ միջոցառումների անցկացման համակարգում,

3.5.4.8. Ինստիտուտի և ամբիոնների միջազգային համագործակցության կազմակերպում և միջազգային կապերի զարգացմանն ուղված գործունեության համակարգում,

3.5.4.9. Ուսանողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպում, համապատասխան միջոցառումների իրականացում:

## 4. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

### 4.1. Ինստիտուտի վարչական անձնակազմի ձևավորումը

4.1.1. Ինստիտուտի վարչական անձնակազմի մեջ ներառվում են Ինստիտուտի տնօրենը, տնօրենի տեղակալը, տնօրենի օգնականը, գործավարը, Ինստիտուտի և ամբիոնների մենեջերները և մեթոդիստները:

4.1.2. Ինստիտուտի տնօրենի տեղակալը կատարում է տնօրենի հանձնարարականները, իրականացնում է տնօրենի գործառույթները նրա բացակայության դեպքում, համակարգում է Ինստիտուտի վարչական անձնակացմի աշխատանքները Ինստիտուտի Գիտական խորհրդի որոշումների և Ինստիտուտի տնօրենի հանձնարարականների գծով:

4.1.3. Ինստիտուտի տնօրենի օգնականը կատարում է տնօրենի կարգադրությունները և պատասխանատու է նրա հանձնարարականների ժամանակին կատարման համար:

4.1.4. Ինստիտուտի վարչական անձնակազմը (տնօրենի օգնականը, գործավարը, մեթոդիստը և մենեջերը) անմիջականորեն ենթակա են Ինստիտուտի տնօրենին:

4.1.5. Ամբիոնի մենեջերը անմիջականորեն ենթակա է ամբիոնի վարիչին:

## 5. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՈՀ ԱՅԼ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԵՏ

### 5.1. Ինստիտուտի փոխազդեցությունը ՀՈՀ համահամալսարանական կառուցվածքային ստորաբաժանումների հետ

5.1.1. Ինստիտուտի և դրա կառուցվածքային ստորաբաժանումների փոխազդեցությունը համահամալսարանական կառուցվածքային ստորաբաժանումների հետ հիմնվում է դրանց կողմից իրականացվող գործառույթների վրա, որոնց շրջանակներում իրականացվում է հորիզոնական փոխազդեցություն տեղեկատվության փոխանակման,

համաձայնեցված գործողությունների իրականացման գծով, որոնք ուղղված են Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների ամբողջական և որակյալ կատարմանը:

5.1.2. ՀՌՀ ռեկտորի այն հրամանների և հանձնարարականների կատարման դեպքում, որոնք ենթադրում են համատեղ աշխատանք ՀՌՀ այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ, Ինստիտուտի աշխատակիցները իրականացնում են համաձայնեցված գործողություններ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ առաջադրված խնդիրներին հասնելու նպատակով:

**5.2. Ինստիտուտի փոխազդեցությունը այլ Ինստիտուտների հետ**

5.2.1. Ինստիտուտի և դրա կառուցվածքային ստորաբաժանումների փոխազդեցությունը այլ Ինստիտուտների հետ հիմնվում է հորիզոնական հաղորդակցության և փոխազդեցության վրա, ինչն արտահայտվում է ուսումնական գործընթացի առանձին բաղադրիչների իրականացման, համակարգման և համաձայնեցման մեջ (լսարանային ֆոնդի բաշխման, դասացուցակների համաձայնեցման և այլ հարցեր՝ հաշվի առնելով ամբիոնների և դասախոսների շահերը):

5.2.2. Ինստիտուտները համաձայնեցնում են միմյանց հետ գործունեությունը նաև գիտահետազոտական ոլորտում, համատեղ հետազոտությունների իրականացման գծով, որոնք ներառում են տարբեր ամբիոնների և գիտական տարբեր ուղղությունների ընդհանուր հետաքրքրության շրջանակները:

5.2.3. Համալսարանական միջոցառումների իրականացման գործընթացում Ինստիտուտները համաձայնեցնում են իրենց ծրագրերը ուսանողական, մշակութային, գիտական, սպորտային և այլ բնույթի միջոցառումների գծով:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

**6.1. Ինստիտուտի ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրները.**

6.1.1. թողարկող ամբիոնների հետ համատեղ դասացուցակների կազմում,

6.1.2. ուսանողներին տրամադրվող տեղեկանքների և տեղեկագրերի պատրաստում, հաստատում, տրամադրում,

6.1.3. ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման գնահատականների և ակադեմիական առաջադիմության ցուցանիշների էլեկտրոնային բազայի ձևավորում, տարատեսակ հաշվետվությունների կազմում, նշված գործառույթների գծով թողարկող ամբիոնների աշխատանքներին աջակցություն և վերահսկողություն,

6.1.4. քննաշրջանների ժամանակացույցերի կազմում և հաստատում, քննությունների և լուծարքների անցկացման կազմակերպում/վերահսկողություն,

6.1.5. ուսանողական համակազմի գծով հրամանների նախագծերի ձևավորման համար անհրաժեշտ զեկուցագրերի կազմում՝ ազատման, հեռացման, տեղափոխման, կրթաթոշակների նշանակման, պրակտիկայի կազմակերպման և այլ հարցերով,

6.1.6. ամփոփիչ ատեստավորման արդյունքներով դիպլոմի հավելվածների կազմում և տպագրություն, շրջանավարտներին դիպլոմների հանձնման կազմակերպում;

6.1.7. ուսումնական գործընթացին ուսանողների մասնակցության վերահսկողություն, համապատասխան դասամատյանների և տեղեկագրերի վարում, գիտելիքների միջանկյալ և ամփոփիչ ստուգումների կազմակերպում, սահմանված կարգապահական կանոնների և նորմերի պահպանման վերահսկողություն և մշտադիտարկում,

6.1.8. ուսանողների անձնական գործերի վարում և պահպանում, առաջին կուրսերի ուսանողների անձնական թերթիկների, ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի կազմում և տրամադրում,

6.1.9. ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված այլ խնդրիների իրականացում:

**6.2. Պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը**

6.2.1. Ամփոփիչ ատեստավորումը բակալավրի և անընդհատ ու ինտեգրված կրթական ծրագրերի գծով, առկա, առկա-հեռակա և հեռակա ուսուցման ձևերի դեպքում, իրականացվում է կրթական ծրագրի ամբողջական կատարման դեպքում, պետական ամփոփիչ ատեստավորման, այդ թվում՝ դիպլոմային աշխատանքի (ավարտական աշխատանքի) պաշտպանության ձևով:

6.2.2. Ամփոփիչ ատեստավորումը մագիստրոսի կրթական ծրագրերի գծով, առկա, առկա-հեռակա և հեռակա ուսուցման ձևերի դեպքում, իրականացվում է կրթական ծրագրի ամբողջական կատարման դեպքում, պետական ամփոփիչ ատեստավորման ձևով:

6.2.3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների թեկնածությունները ՀՌՀ ռեկտորին են ներկայացվում Ինստիտուտի տնօրենի կողմից՝ համապատասխան հրամանով հաստատման նպատակով:

6.2.4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների թեկնածությունները ՀՌՀ ռեկտորին են ներկայացվում Ինստիտուտի տնօրենի կողմից՝ ՌԴ Գիտության և բարձրագույն կրթության և ՀՀ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից հաստատումից հետո համապատասխան հրամանով հաստատման նպատակով:

## 7. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Ինստիտուտի գիտահետազոտական գործունեության կազմակերպումը հանդիսանում է նրա կազմի մեջ մտնող ամբիոնների և/կամ լաբորատորիաների գործառույթը:

7.2. Ինստիտուտի գիտահետազոտական գործունեության ռազմավարությունը ներառում է Ինստիտուտի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գիտական հետազոտությունների կարևոր ուղղությունները, գիտական կադրերի պատրաստումը և միջազգային համագործակցության և կապերի զարգացումը գիտահետազոտական ոլորտում:

7.3. Յուրաքանչյուր գիտական ուղղություն ունի ղեկավար, որը համակարգում է տվյալ ուղղության մեջ ընդգրկված դասախոսների, գիտաշխատողների և ուսանողների աշխատանքը:

## 8. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

**8.1. Ինստիտուտը սահմանում է.**

8.1.1. Ինստիտուտի միջազգային կապերի համակարգումը և միջազգային համագործակցության զարգացումը,

8.1.2. ՀՌՀ այլ Ինստիտուտների հետ փոխադեցությունը՝ միջազգային գիտակրթական գործունեության իրականացման ուղղությամբ,

8.1.3. Ինստիտուտի մասնակցությունը միջազգային գիտակրթական ծրագրերին (այդ թվում ուսանողների, դասախոսների և գիտաշխատողների ակադեմիական փախանակման ծրագրերին),

8.1.4. հանրային գիտական սեմինարների, գիտաժողովների և գիտական համաժողովների կազմակերպում և իրականացում, այդ թվում արտերկրյա մասնագետների մասնակցությամբ,

8.1.5. Ինստիտուտի կազմի մեջ մտնող կառուցվածքային ստորաբաժանումների միջազգային գործունեությանն ու համագործակցությանը աջակցություն, նրանց կողմից իրականացվող միջազգային ծրագրերի (այդ թվում դրամաշնորհային) համակարգում և վերահսկողություն:

## 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ՀՌՀ Գիտական խորհրդի կողմից հաստատումից և ՀՌՀ ռեկտորի համապատասխան հրամանի հրապարակումից հետո:

9.2. Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները իրականացվում են ՀՌՀ Գիտական խորհրդի որոշումների հիման վրա: